



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

18-89

897.542-8

Թ-89

ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԳՐԱԴԱՐԱՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆ
ՊԵՏՂՐԱՆ
1929

19 NOV 2011

891.99

1089

um

ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԳՐԱԴԱՐԱՆ

~~ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ~~

~~ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ~~



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

370
45.

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Գրառեպ. № 1760 Բ. Պատվ. № 289
Հր. № 953 Տիրաժ 2000

ՀԻՆ ՈՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քեֆ ելին անում
Յեվ ուրախանում
Մեր հրսկա պապերն ու մեր հայրերը՝
Գյուղի տերերը:

Մենք՝ առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ՝
Յերեք գասրնկեր,
Նըրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներին դըքած,
Զի, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում,
Տազ ելինք ասում:

Յերբ գվարթաձայն մեր յերզը լըռեց,
Մըռալ թամազեն բեղերն ոլորեց,
Նըրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ որհնեցին.— Ապրեք, յերեսեք,
Բայց մեզ պես չապրեք...



Ժամանակ անցավ, նըրանք ել անցան,
 Զըվարթ յերգերըս վըշտալի դարձան.
 Յեվ յես հիշեցի մեր ոըը լալիս,
 Թե մեզ որհնելիս

Ինչո՞ւ ասացին. «ապրեք, յերեխեք,
 Բայց մեզ պես չապրեք»...

Խաղաղություն ձեզ, մեր անբախտ պապեր,
 Ձեզ տանջող ցավը մեզ ել ե պատել.
 Այժմ, տխրության թե քեֆի ժամին,
 Մենք ել որհնելիս մեր զավակներին
 Ձեր խ սքն ենք ասում. «Ապրեք, յերեխեք,
 Բայց մեզ պես չապրեք»...

1887

ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,
 Որն յեկել ե, ճաշ դառել,
 Առ շուռ տուր, խոփիդ զուրբան,
 Որհնյալ ե աստված, հորովել:

Քաշի, յեզը, ուսիդ մատաղ,
 Քաշի, քաշենք, վար անենք.
 Ճիպտին արա, քըշի, հոտաղ,
 Մեր սև որին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գընաց,
 Քյոխվեն կըգա, կըծեծի.
 Տերտերն որհնեց, անվարձ մընաց,
 Կը բարկանա, կանիծի:

Են որն յեկան թովջի արին,
 Հարկ են ուզում տերության.
 Ի՞նչ տամ կոռին ու բեգյարին...
 Վարի, վարի, իմ գութան:

Ձեռքս պակաս, ուժքս հատած,
 Հազար ու մի ցավի տեր,
 Ինձ են նայում մերկ ու սոված
 Ծի տուն լիքը ժանուկներ:

Արի, գութան, վարի, գութան,
 Որն յեկել ե, ճաշ դառել,
 Առ շուռ տուր, խոփիդ զուրբան,
 Որհնյալ ե աստված, հորովել:

1887

ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

(Լեզեհգ)

Վաղ ժամանակ մի հայ շենում
 Մի հարգևոր հարան ե լինում:
 Նըրա բերնից կեսուր, կեսառ
 Չեյին լըսել մի շունչ, մի բառ,
 Չեյին տեսել շուրթը մի որ...
 Եսպես խոնարհ ու հարգևոր:
 Մի որ մենակ տանը նստած,
 Իր ճոխ մազերն արձակ թափած,
 Ազատ, անփուլթ սանրում, հլուսում,
 Հետն ել ձենով չերգ ե ասում:

«Աշխարհը բանտ,
 Մեջը անբախտ
 Յես մի գերի անխնդում.
 Սիրուն շորեր,
 Ձահել որեր
 Ի՞նչ եմ անում ես բանտում»
 Երնեկ ծըտին,
 Ճյուղքի միջին
 Ծըվլըում ե, թըրթըում,
 Թըռչում սիրած,
 Ընկերն առած,
 Ազատ, կանաչ արտերում:
 Ախ, սե ըլի,
 Չըքվի, փրի

Ծընված որը աղջկա,
 Յավ ու խընդում
 Փակված սըրտում,
 Ծիծաղ չըկա, «ախ» չըկա»...
 Մին ել հանկարծ բացվեց դուռը,
 Ու ներս մըտավ ծեր կեսուրը:
 — Հո, պո, պո, պո, — կանչեց խեղճը,
 Դետին, պատռի, մտնեմ մեջը...
 — Հոպոպ դառնաս,
 Անամոթ հարս:
 Մի տես, մի տես,
 Թե լըբի պես
 Գըլուխը բաց
 Ազատ նըստած
 Վոնց ե կանչում,
 Չի ամաչում...
 Լեզուդ լալի,
 Մազըդ թաղքի,
 Դըլխիդ կպչի
 Սանըր միջի:
 Ասավ չասավ,
 Մին ել տեսավ,
 Սանըր գըլխին
 Հարսն առաջին
 Հոպոպ դառավ,
 Յերգկից թըռավ
 Ու վերացավ
 Վեր, հեռացավ:
 Են եր ու են.
 Պեղճն են որեն

Հանդերն ընկած
Հոպոս ժընաց.
Միշտ ել են հին
Սանըը գըլխին,
Չալիկ-ժալիկ,
Լեզուն լալիկ,
Անխոս ու լուռ,
Մոլոր, տըխուր:

Բայց չերբ հանկարծ
Միտն ե գալիս,
Վոր գլխաբաց
Յերգ ասելիս
Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր ե թըռչում
Սըրտատըրոփ
Ու դեռ ճըչում.
— Հո-պոս... Հո-պոս...

1898.

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՁԻՆ

(Լեզենգ Ջուղայի գաղթից)

— Հէյ, լավ մանրոք,
Ասեղ, հուճենք,
Մատնիք, ժարջան,
Ապարանջան...
Համ, ձու բերեք,
Առեք, տարեք,
Խունջիկ-մունջիկ
Հարսն ու աղջիկ,
Եժան կըտամ,
Լավը կըտամ...

Եսպես կանչելով՝ փողոցից փողոց,
Իբրե թե չարչի մի թափառական,
Չարչու կերպ մըտած, ինչպես վիշապ ոձ,
Անցնում եր ինքը՝ Շահ-Աբաս արքան:

— Հէյ, ո՞վ կուզի թել ու ասեղ,
Դուրս եկեք դուրս, ինձ մոտ, եստեղ...

— Չարչի ախպեր, չարչի ախպեր,
Ասեղ ունի՞ս, ես կողմը բեր:
Կանչեց մի կին՝ հայ գաղթական,
Ու մոտ գընաց չարչին կընկան:

— Ո՛ր, ի՞նչ ասեղ. իսկն ոձի քիստ...

Թոփը մի հաց...

— Վա՛ւ, թանգ ե խիստ...

—Ե՛, մի խոսիր, քուրիկ, եղբայրս,
Շահի կյանքը թե կըսիրես:

—Աման, հողեմ գլուխը Շահի,
Աստված Շահից հեռու պահի.
Արեգ ապրի, չարչի ախպեր,
Եդ անուշը բերան մի բեր:

—Վահ, եսքան ել չմը լինի մարդ.
Ի՞նչ ե տրել Շահը ձեզ վատ:
Գազան թուրքի սըրից փըրկել,
Չոր Զուղալի քարից պոկել՝
Բերել ե ձեզ ազատ Փարյա*),
Աչքն ել քաղցըր միշտ ձեզ վըրա...

Ո՛ֆ, հերիք ե, չարչի ախպեր,
Մի խոսեցնիր ինձ դըրանից:
Երնեկ դըրա վոտը կոտրեր՝
Չըգար հաներ մեզ մեր տանից:

Յեկավ վարար հեղեղի պես,
Չարկեց մեր շեն, մեր լի Զուղան,
Վոչ աստըծուն նալեց, վոչ մեզ,
Սըրբեց բերավ վողջ տեղահան:

Թող արինք փակ մեր տուն ու ժամ,
Բանալիներն Արագն ածինք,
Սարի ուսից վերջին անգամ
Յետ նալեցինք ու կանչեցինք.

«Աստվածածին վերին կաթան,
Քեզ ամանաթ մեր սուրբ վաթան.
Ուր վոր գընանք մեր վաթանից՝
Մեզ դարձըրու գերությունից»:

*) Պարսկաստանի են գավառը, ուր բնակեցրին
Զուղալի հայերին:

—Աղաչեցինք աղերսելով,
Յետ շուռ լեկանք ու անց կացանք.
Ծեծով, կոծով, հըրով, սրով՝
Ծով Արագի ափը հասանք:
Արագը ծով, Արագն ելման,
Դուրս ե լեկել իր ափերից.

«Անցեք», յեկավ մեզ հըրաման.
Շահն ե հրաման տալիս վերից...

Յետեղ սո՛ւր, առաջը ջո՛ւր,
Սո՛ւգ, վաճառու՛ն, իրարանցում,
Բառաշում են մեծ ու պուճուր,
Իրար գըրկված՝ գետը լըցվում...
Են սև որը, վոր մենք տեսանք,
Քո թըշնամին թող չըտեսնի...
Ա՛խ, յե՛րբ պիտի մին ել տեսնենք՝
Մեր անեծքը լերկինք հասնի...

Ու գալիս են չարչու գըլխին
Կիտվում պանդուխտ, գերի հայեր.
«Անե՛ծք Շահին, իրեն գահին»,
Անխժում են լերկինքն ի վեր:

Շուռ են գալիս իրենց բընում
Չարչու աչքերն ըսպառնալի,
Չեն ու վոտը գող են լինում,
Ու, սևակնած, հարց ե տալի.

— Շահի առջև հապա են որ
Գոռում եյիք միաբերան,
Թե ապրում եք դուք բախտավոր
Ու որհնում եք թախթն ու իրան...

—Սուտ եր, ախպեր: Դու մեզնից մեկն
 Ի՞նչ թագցնենք մենք բեզանից,
 Բայց մեր սիրտը վճնց չըծածկենք
 Են մարդակեր չար գազանից:

Սուտ եր: Ու միշտ, քանի վոր կա
 Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
 Ձի լինելու յերկրի վրա
 Վոչ շիտակ խոսք, վոչ կյանք, վոչ սեր...

Մռնչաց չարչին, աբեն շրպրտեց,
 Դուրս յելավ տակից Շահ-Աբասն ահեղ,
 Նաջաղը ցուաց, իջավ շեշտակի,
 Գերի ծերունին փրովեց տեղնուտեղ:

Փրովեց... Ու միշտ, քանի վոր կա
 Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,
 Ձի լինելու յերկրի վրա
 Վոչ շիտակ խոսք, վոչ կյանք, վոչ սեր:

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐ

(Հ Ե Ֆ Ի ա ք):

Մի գյուղացի իրենց գյուղում
 Խանութ սարքել, բան եր ծախում:
 Ու վան մի որ մոտիկ գյուղից,
 Մահակն ուսին, շունն յետևից
 Ներս ե մտնում մի զրո չորան.

—Բարի որ քեզ, այ խանութպան,
 Մեղըը շունեմ,
 Միքիչ տաս մեզ:

—Ունեմ, ունեմ, չորան ախպեր.
 Ամանդ հըր ե, ամանդդ բեր,
 Ինչ տեղից վոր ինքդ կուգես,
 Ես սըհաթին քաշեմ տամ քեզ:
 Եսպես հանգիստ,
 Եսպես սիրով,
 Մեղրից անուշ—
 Լավ խոսքերով

Մեղը են քաշում, մին ել հանկարծ
 Մի կաթիլ մեղրը ծորում ե ցած:
 —Տը՛ղղ.—են կողմից մի ճանճ գալի,
 Ես կաթիլին վեր ե գալի:
 Ճանճի վրա թագուն-թագուն,
 Ես խանութի տիրոջ կատուն
 Դուրս ե ցատկում,
 Թաթով զարկում....

Բայց հենց կատվի ցատկերու հետ
 Հովիվի շունը իսկույն կեթ
 Հաֆ ե անում,
 Վեր ե կենում,
 Խեղճ փխիկին
 Դընում տակին,
 Ձեռաց խեղդում
 Ու շրպրտում:

«Խեղդեց, խեղդեց, վա՛յ, իմ կատուն.
 Այ սատկես դու, շան վորդու շուն»,
 Բարկանում ե խանութպանը
 Ու ձեռն ընկած մոտիկ բանը
 Տուր՝ թե կըտաս շան ճակատին,—
 Շուռ ե տալի կատվի կողքին:
 — Վա՛յ, ձեզ մատաղ, ապրան շունըս,
 Իմ ապրուստը, տեղըս, տունըս...
 Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,
 Անխիղճ, լիրբ, չար, ֆրլան, ֆըստան,
 Վա՛նց թե դու իմ շանը զարկես,
 Դե, զարկելը հիմի դու տես...»
 Գոռում ե մեր աժդահակը
 Մեծագլուխ իր մահակը
 Յետ ե տանում ու ցած բերում,
 Խանութպանին շեմքում փռում:
 — Սպանեցին... հա՛յ, ոգնություն...»
 Աւ թաղից թաղ, ու տանից տուն
 Ձեն են տալի մեկը մյուսին.
 — Հե՛յ, ոգնություն... սպանեցին...»
 Վերի թաղից, ներքի թաղից,
 Ճամպի վրից, գործի տեղից,

Ճիշով, լալով,
 Հարայ տալով —
 Ել հերն ու մեր,
 Քիր ու ախպեր,
 Կին, երեխեք,
 Ընկեր տղեք,
 Զոքանչ, աներ,
 Քավոր, սանհեր,
 Քեռի, փեսա...

Ինչ իմանաս ել՝ ո՛վ ե սա,
 Գալիս են ու անվերջ գալիս,
 Ով գալիս ե՝ տուր ե տալիս.
 — Ա՛ռ, կոպիտ արջ, տո՛, վայրենի՛,
 Ես տեսակ ել բան կըլինի՛.
 Դու առուտուր յեկար անես,
 Թե՛ իր շեմքում մարդ սպանես...»

Մին ասում են—տասը զարկում,
 Աղցան անում, մեջտեղ ձրգում
 Իր շան կողքին յերկար ու մեկ:
 — Դե, ձեր մեռելն եկեք տարեք:
 Ու եստեղից բոթը գնում,
 Դընում մոտիկ գյուղն ե հասնում.
 — Հե՛յ, ողնեցեք,
 Մեռած հո չեք,
 Սպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շնաճանճի մի բուն
 Քանդես, թողնես,
 Են ճանճի պես
 Ամբողջ գյուղով որդու կապում,
 «Բուհ» են անում, դուրս են թափում

Բայց հենց կատվի ցատկերու հետ
Հովվի շունը իսկույն կեթ
Հաֆ ե անում,
Վեր ե կենում,
Խեղճ փխիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում
Ու շրպրտում:

«Խեղդեց, խեղդեց, վա՛յ, իմ կատուն.
Այ սատկես դու, շան վորդու շուն»,
Բարկանում ե խանութպանը
Ու ձեռն քնկած մոտիկ բանը
Տուր՝ թե կըտաս շան ճակատին,—
Շուռ ե տալի կատվի կողքին:
— Վա՛յ, ձեզ մատաղ, ապան շունըս,
Իմ ապրուստը, տեղըս, տունըս...
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆրլան, ֆրստան,
Վհնց թե դու իմ շանը զարկես,
Դե, զարկելը հիմի դու տես...»
Գոռում ե մեր աժդահակը
Մեծազուլիս իր մահակը
Յետ ե տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փռում:
— Սպանեցին... հա՛յ, ոգնություն...»
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեն են տալի մեկը մյուսին.
— Հե՛յ, ոգնություն... սպանեցին...»
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամպի վրից, գործի տեղից,

Ճիչով, լալով,
Հարայ տալով —
Ել հերն ու մեր,
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր տղեք,
Ձոքանչ, աներ,
Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...

Ինչ իմանաս ել՝ ո՛վ ե սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս ե՝ տուր ե տալիս.
— Ա՛ռ, կռպիտ արջ, տո՛, վայրենի՛,
Ես տեսակ ել բան կըլինի՛.
Դու առուտուր յեկար անե՛ս,
Թե՛ իր շեմքում մարդ սպանես...»

Մին ասում են—տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձըգում
Իր շան կողքին յերկար ու մեկ:
— Դե, ձեր մեռելն եկեք տարեք:
Ու եստեղից բոթը գնում,
Գընում մոտիկ գյուղն ե հասնում.
— Հե՛յ, ողնեցեք,
Մեռած հո չեք,
Սպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շնաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
Են ճանճի պես
Ամբողջ գյուղով որդու կապում,
«Բուհ» են անում, դուրս են թափում

Ամեն մինը առած մի բան.
 Վորը ձեռին մի հրացան,
 Վորը յեղան, ցաքատ կամ սուր,
 Վորը թի, բահ, վորը շամփուր,
 Վորը կացնով, վորը փետով,
 Վորը ձիով, վորը վոտով,
 Վորն անգըտակ, վորը բոբիկ—
 Դեպի դուշման գլուղը մոտիկ:
 — Տո, եսպես ել անիրավ գլուղ.
 Վոչ խիղճ ունեն, վոչ ահ-յերկուղ.
 Մարդ դնում ե առուտուրի,
 Հավաքվում են, քաշում սըրի:
 Թո՛ւ ձեր գլուղին, միջի մարդին,
 Ձեր նամուսին, ձեր աղաթին...

Գնանք՝ զարկենք...

Ջարդենք, կրակենք...

— Հայ, հայ, առաջ, դե՛, ձեզ տեսնեմ...

Ու դուրս յեկան իրարու դեմ:
 Հա զարկեցին ու զարկեցին,
 Կոտորեցին, կըրակեցին.
 Ինչքան ավել կոտորեցին,
 Ենքան ավել կատաղեցին.

Ջարդեցին իրար,

Ջրնջեցին իրար,

Կորան, գընացին

Գետնին հավասար:

Դու մի ասիւ, մեկը մեկից
 Եսքան մոտիկ սահմանակից
 Ես գլուղերը հարկ են տալի
 Ամեն մինը մի արքայի:
 Մի տերության թագավորը,

Յերբ լսում ե ես բոլորը,
 Արձակում ե հրովարտակ
 Ժողովրդին իր հպատակ.
 — Հայտնի լինի մեր տէրության,
 Զինվոր, բանվոր, ազնվական—

Ամեն շարքին

Ու աշխարքին,

Վոր անորեն ու՛ դավաճան
 Մեր դրացի ազգը դաժան,
 Յերբ մենք քսած ելինք սիրով,
 Մեր սահմանը մտավ զոռով,
 Ու կոտորեց սուրը ձեռին
 Մեր սիրելի զավակներին:
 Արդ, սրահար ու հրակեզ
 Մեր վորդիքը կանչում են մեզ,
 Յե՛վ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
 Պատվեր ավինք մեր բանակին,
 Թնդանոթով մեր ավերող
 Ու աստուծով մեծակարող,
 Հանուն արդար ու սուրբ վոխի
 Մտնի հողը մեր վոսոխի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
 Գրեց զորքին, ժողովրդին.

— Մարդկանց առաջ և աստրծու,
 Բողոքում ենք մեր դըրացու
 Վարմունքի դեմ և՛ չար և՛ նենգ,
 Վոր՝ վոտքելով ամեն որենք,
 Բորբոքում ե կռիվ ու վեճ
 Հին հարևան ազգերի մեջ,
 Քանդում սիրո զաշը կապած:

Արդ՝ ահա մենք ստիպված,
 Հանուն պատվի, արդար լիցան,
 Հանուն թափված անմեղ արյան,
 Հանուն ազատ մեր աշխարհի,
 Հանուն աստծու և իր փառքի—
 Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
 Ու մեր սուրբ նորա վրրա:
 Ու սկսվեց կրօնի ահեղ:

Շոինդ, վորոտ ալստեղ, ալստեղ:
 Կրքակն ընկավ շեն ու քաղաք,
 Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
 Ամեն կողմից սարսափ ու բռնի,
 Ամեն կողմից մեռելի հոտ...

Ամառ, ձրմեռ,
 Վողջ տարիներ
 Մշակն անբան,
 Դաշտերն անցան,

Ու կոծվե չըգաղարած,
 Սովը լեկավ համատարած:
 Սովը լեկավ, սովի հետ ցավ,
 Ծաղկած լերկիրն ամայացավ...
 Իսկ մնացած ժարդիկն իրար
 Հարցնում եյին սարսափահար
 Թե վճռտեղից արդյոք ծագեց
 Ես ընդհանուր աղետը մեծ:

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

(Լ Ե Ք Ի Ա Յ)

1.

Լինում ե չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Ես
 Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ ե լինում: Ենթան ել
 վախկոտ, Ենթան ել վախկոտ, վոր մենակ վոտը վոտի առաջ չեմ
 դնի, թեկուզ սպանեյիր: Որը մինչև իրիկուն կնկա կողքը կըս-
 րած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս եր գնում, տուն գալիս՝
 տուն գալի: Դրա համար ել անունը դնում են Վախկոտ Նազար:

Ես Վախկոտ Նազարը մի գիշեր կնկա հետ շեմքն ե դուրս
 գալի: Վոր շեմքն ե դուրս գալի՝ տեսնում ե ճրըքճրքան լուս-
 լուսնյակ գիշեր՝ ասում ե.

Այ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր ե... Սիրտս ա-
 սում ե՝ վեր կաց գնա Հնդստանից յեկող Շահի քարվանը կտրի
 բեր տունը լցրու...»:

Կնիկը թե՛

— Ձեռք կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ
 արա...

Նազարը թե՛

— Անգղամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում՝ չես գնամ քար-
 վան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Ել ի՞նչ տղամարդ եմ յես, ել
 ինչո՞ւ չեմ գդակ ծածկում, վոր դու համարձակվում ես իմ առա-
 ջը խոսես»:

Վոր շատ կռվում ե՝ կնիկը տուն ե մտնում, դուռը փակում:

— Հնդեմ եղ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի:

Ես Նազարս մնում ե դռանը: Վախից լեղապատառ ե լինում:

Ինչքան աղաչում-աղաատում ե, վոր կնիկը դուռը բաց անի, չի
 լինում, բաց չի անում: Ծարը կտրած գնում ե մի պատի տակի
 կուչ ե գալի, դողալով գիշերն անց ե կացնում, մինչև լուսը բաց-
 վում ե: Նազարը խռոված, պատի տակին արեկող արած սպա-

սում ե, վոր կնիկը գալ տուն տանի, ու միտք ե անում: Ամառվա շոգ օր՝ գաղաղած ճանճեր. ինքն ել ենքան ալարկոտ, վոր ալարում ե քիթը սրբի—ճանճերը գալիս են սրա քիթ ու պոռնկին վեր գալի, լցվում: Վոր շատ նեղացնում էն՝ ձեռքը տանում ե յերեսին զարկում: Վոր յերեսին զարկում ե՝ ճանճերը ջարգվում են, առաջին վեր թափում:

— Վահ, ես ինչ եր...— ցնում ե զարմացած:

Ուզում ե հասնի, թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում ե, վոր հաղարից պակաս չի լինի:

— Վահ,—ասում ե,—յեսեսպես տղամարդ եմ ելել ու մինչև ետոր չեմ իմացել... Յես, վոր մի զարկով կարող եմ հաղար շունչ կենդանի ջարգել, ել ինչ եմ ես անպիտան կնկա կողքին վեր ընկել...

Եստեղից վեր ե կենում, ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

— Տերտեր, որհնչա ի տեր:

— Աստված որհնի, վորդիս:

— Տերտեր, բա չես տսիլ՝ եսպես-եսպես բան:

Պատմում ե իր քաջագործությունն ու հետն ել հայտնում ե, վոր պետք ե իր կնկանից կորչի, միայն խնդրում ե՝ իր արածը տերտերը գրի, վոր անհայտ չմնա, ամենքն ել կարդան, իմանան: Տերտերն ել կատակի համար մի փալասի կտորի վրա գրում ե.

Անհաղթ հերոս Քաջ Նաղար,

Վոր մին զարկի, ջարդի հաղար,

ու տալիս ե իրեն:

Նաղարս ես փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում ե, մի ժանգոտ թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում:

2.

Իրենց գյուղից գուրս ե գալի, մի ճամպա չե ընկնում ու գնում: Ինքն ել չի իմանում, թե եդ ճամպեն ուր ե տանում:

Քնում ե գնում, մին ել չետ ե նայում, տեսնում ե՝ գյուղից հեռացել ե: Եստեղ սիրտն ահ ե ընկնում: Իրեն սիրտ տալու համար սկսում ե քթի տակին մոմալ, չիրգել, իրեն-իրեն խոսել,

իշի վրա բարկանալ: Քանի հեռանում ե՝ ենքան վախը սաստկանում ե, քանի վախը սաստկանում ե, ենքան ձենը բարձրացնում ե, սկսում ե զոռզոռալ, հարաչ-հրոց անել, հետն ել մյուս կողմից եղն ե սկսում դալ... Ես աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանաչիցն են ջուրը թափում...

Նաղարը ձենն ալելի չե գլուխը գցում. իսկ վոր մոռնում ե անտառը—թվում ե, թե ամեն մի ծառի տակից. ամեն մի թփի միջից, ամեն մի քարի լիտեից՝ վորտեղ-վոր ե դազան ե հարձակվելու կամ ավազակ. սարսափած սկսում ե զոռզոռալ, վճնց զոռզոռալ—ալանջը վոչ լսի:

Դու մի ասիլ՝ հենց ես ժամանակ մի գյուղացի ձին քաշելով անտառում միամիտ գալիս ե: Ես զարհուրելի ձենն ալանջն ե ընկնում թե չե՝ կանգնում ե:

— Վահ,—ասում ե,—վճնց թե իմն ել եստեղ եր հառել. կա-չկա՝ ես ավազակներ են...

Ձին թողնում ե, ընկնում ե ճամպի տակի անտառն ու՝ յերկու վոտն ուներ, յերկուսն ել փոխ ե առնում, փախչում:

Բախտը սիրեմ, Քաջ Նաղար, զոռզոռալով գալիս ե տեսնում՝ մի թամբած ձի ճամպի մեջտեղը կանգնած իրեն ե սպասում: Իշիցը վեր ե գալի, ես թամբած ձիուն նստում ու շարունակում իր ճամպեն:

3.

Շատ ե գնում, քիչ ե գնում, շատն ու քիչն ել ինքը կիմանար, գնում ե ընկնում մի գյուղ. ինքը գյուղին անծանոթ, գյուղն իրեն: Ուր գնա, ուր չգնա: Մի տանից գուռնի ձեն ե լսում. ձին քշում ե ես ձենի վրա, գնում ընկնում ե մի հարսանքատուն:

— Բարի որ ձեզ:

— Ա՛յ աստու բարին քեզ, բարով հաղար բարի յեկար:

Համեցեք հա, համեցեք. դե զոնախն աստուռնն ե. սրան տանում են սուփրի վերի ծերին բազմեցնում: Աչքդ են բարին տեսնի, ինչ վոր լցնում են առաջը—թե ուտելիք, թե խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են իմանան, թե ով ե ես տարորինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բոթում ե իր

կողքի նստածին ու հարցնում, սա չե՛լ իր կողքը նստածին ե
րոթում, եսպես հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը
մնում է վերի ձերին նստած փոքրերին: Տերտերը մի կերպ դո-
նախի զրոշակի վրա կարգում է:

Անհաղթ հերոս Քաջն Նազար,

Վոր մին զարկի, ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած հաշտնում իր կողքի նստածին,
սա չե՛լ իր կողքի նստածին, սա չե՛լ յերբորդին, յերբորդը չորրոր-
դին. եսպեսով հասնում է մինչև դռան տակը ու ամբողջ հար-
սանքատունը զրմբում է թե՛ բա՛ չես ասի՛լ նորեկ զոնախն ե
ինքը՝

Անհաղթ հերոս Քաջն Նազար,

Վոր մին զարկի, ջարդի հազար:

— Քաջ Նազարն է հա՛... — բացականչում է պարծենկոտի-
մինը. ի՛նչքան է փոխվել. միանգամից լավ չճանաչեցի...

Յե՛վ մարդիկ են դա՛նվում, վոր պատմում են նրա արած
քաջութիւնները, հին ծանոթութիւնն ու միասին անցկացրած
որերը:

— Հապա ի՛նչպես ե, վոր եսպես մարդը հետը վոչ մի ծա-
ռա չունի, — զարմանքով հարցնում են անծանոթները:

— Եղպես ե զրա սովորութիւնը, ծառաներով ման գալ չի
սիրում: Մի անգամ յես հարցրի, ասա՛վ՝ ծառան ի՛նչ եմ տ-
նում, ամբողջ աշխարքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ի՛նչպես ե, վոր մի կարգին թուր չունի, ես ժան-
դոտ չերկաթի կտորն ե մեջքին կապել:

— Շնորհքն ել հենց զրա մեջն է, վոր ես ժանդոտ չերկա-
թի կտորով մին զարկես, ջարդես հազար, թե չե լավ թրով — ի՛նչ
կա վոր, սովորական քաջերն ել են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը վոտի չե կանգնում, խմում է Քաջ
Նազարի կենացը: Իրենց միջի խելոքն ել դուրս ե դալի, ճառ ե
ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց ելինք լո՛ւկ քո
մեծ հռչակը, կարոտ ելինք չերեսդ տեսնելու ե ահա եսոք բախ-
տավոր ենք, վոր քեզ տեսնում ենք մեր մեջ: Նազարը հառա-
չում է ու ձեռքը թափ տալի: Ժողովականները խորհրդավոր ի-
րար աչքով են անում, հասկանում են, թե եզ հառաչանքն ու
ձեռքի թափ տալն ինչքան բան կնաշանակեր...

Աշուղն էլ, վոր Թնտեղ եր, ձեռաց չերդ ե հորինում ու
ձերգում:

Բարով չեկար, հազար բարի,

Հզոր արծիվ մեր ասարերի,

Թագ ու պարծանք մեր աշխարհի,

Անհաղթ հերոս, Քաջ Նազար,

Վոր մին զարկես, ջարդես հազար:

Խեղճ տկարին դու ապավեն,

Ազատ կանես ամեն ցավեն,

Մեզ կփրկես անիրավեն,

Անհաղթ հերոս, Քաջ Նազար,

Վոր մին զարկես, ջարդես հազար:

Մատաղ ենք մենք քո դրոշին,

Մեջքիդ թրին, տակիդ ուշին,

Նրա վոտին, պոչին, բաշին.

Անհաղթ հերոս, Քաջ Նազար,

Վոր մին զարկես, ջարդես հազար:

Ու ցրվելով հարրած հարսանքավորները տարածում են ա-
մեն տեղ, թե գալիս է՝

Անհաղթ հերոս Քաջն Նազար,

Վոր մին զարկի, ջարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործութիւնները, նկա-
րագրում են նրա անուշիկ կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց
նորածին լերեխաների անունը գնում են Քաջ Նազար:

4.

Հաջորդաբարտից հեռանում է Նազարը ու շարունակում է
իր ճամպին: Գնում է հասնում մի կանաչ դաշտ: Ես կանաչ
դաշտում ձին թողնում է արածի, զրոշակը տնկում է, ինքն ել
զրոշակի շվաքումը պսակում քնում:

Դու մի՛ տախ, ոխտը հսկա լեղբալրներ կան, ոխտը ափազա-
կապես, ես տեղերը նրանցն են, իրենց ամբողջն ել մոտիկ սարի
գլխին ե: Ես հսկաները վերեկից մտիկ են տալիս՝ վոր մի մարդ
չեկել է իրենց հանդում վեր ե չեկել: Շատ են զարմանում, թե

ես ի՞նչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի՞ գլխանի, վոր առանց քաշվելու չեկել է իրենց հանգում հանգիստ վեր չեկել ու ձին ել բաց թողել: Ամեն մինը մի գուրդ ունեւ՝ քառասուն լըգրանոց: Ես քառասուն լըգրանոց գուրդները վերցնում եմ գալի: Գալիս եմ ի՞նչ տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերեք մի դժոխակ տնկած, գրոշակի վրեն գրած:

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Վոր մին գարկի, ջարդի հազար:

Վա՛յ, Քաջ Նազարն ե՛... մատները կծում են հսկաներն ու մնում տեղները սառած: Դու մի ասիլ, հարրած հարսանքավորների տարածած լուրը սրանց ել է լինում հասած: Եսպես թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչև Նազարն իր քունը առնում է ու զարթնում. վոր զարթնում է, աչքերը բաց է անում, տեսնում գլխավերեք քառասուն լըգրանոց գուրդներն ուսերին ոխտն ահռելի հսկաներ կանգնած. ել փորումը սիրտ չի մնում: Մտնում է իր գրոշակի. յետեն ու սկսում է գողալ, վոնց վոր աշունքվա տերերը կողդա: Ես հսկաները վոր տեսնում եմ սա գունատվեց ու սկսեց գողալ, ասում են՝ բարկացավ, հիմի վոր տեղ վոր ե՛ մի գարկով ոխտիս ել կսպանի, առաջին գետին եմ փովում ու խնդրում եմ:

Անհաղթ հերոս, Քաջ Նազար,
Վոր մին գարկես, ջարդես հազար,

«մենք լսել ելինք քո ահավոր անունը, տեսութանդ ելինք փափագում. այժմ բախտավոր ենք, վոր քո վոտով ես չեկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ, ոխտն ախպեր ենք, ահա մեր ամրոցն ել են սարի գլխին ե՛ մեջը մեր զեղեցիկ բույրը: Աղաչում ենք՝ շնորհ տես, գաս մեր հացը կտրես...»:

Եստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք ել գրոշակն առած առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը: Տանում են ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով, ու ենքան են խոսում նրա քաջագործութուններից, ենքան են գովում, վոր իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասիլ կուզի՝ հարգն ու պատիվն ել հետն աղելանում է:

Ես ժամանակ մի վագր է լույս ընկնում ես չերկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրա: Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե Քաջ Նազարը կսպանի: Ել ո՞վ սիրտ կանի վագրի գեմ գնա: Ամենքն ել Նազարի չերեսին են մտիկ տալի. վերեք մի աստված, ներքեք մի Քաջ Նազար:

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախեց գուրս է վագում, ուզում է փախչի, յետ գնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են, թե վագում էր, վոր գնա վագրին սպանի: Նշանածը բռնում է կանպնեցնում, թե՛ ուր ես վագում եղպես առանց գենքի, գենք առ հետդ, ենպես գնա: Զենք է բերում տալիս իրեն, վոր գնա իր փառքի վրա մի քաջութուն ել ավելացնի: Նազարը գենքն առնում է, գուրս գնում: Գնում է անտառում մի ծառ բարձրանում, վրեն տապ անում, վոր վոչ ինքը վագրին պատահի, վոչ վագրը իրեն: Մտի վրա կուչ է գալի ու Նազարն ո՞վ կտա—հոգին դառել է կորեկի հատ: Հակառակի նրման անտեր վագրն ել գալիս է, հենց ես ծառի տակին պառկում: Նազարը վոր վագրին չի տեսնում—լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու վոտը թուլանում են ու, թրբ՝ մի, ծառիցն ընկնում է գազանի վրա: Վագրը սարսափած տեղեցը վեր է թռչում, Նազարը մեջքին կպած, ես խրտնած վագրը փախչում է, վոնց է փախչում, ել սար ու ձոր, քար ու քու չի հարցնում:

Մարդիկ մին ել տեսնում են՝ վահ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է:

— Հնչ-հարնչ, եկեք հա, եկեք, Քաջ Նազարը վագրին ձի չե չինել հեծել. . . տվեք հա, տվեք...—Մրտավորվում են, ամենքը մի կողմից հարաչ-հրոցով, հոհոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում:

Նազարը վոր ուշքի չե գալի, լեզուն բացվում է—ափսոս, ասում է, ընչի՞ սպանեցիք, գոռով մի ձի ելի չինել նստել... Էնքան պետք է քշելի վո՛ր...

Լուրը գնում է հասնում ամրոցը: Մարդ, կին, մեծ, պատիկ՝ ժողովուրդը գուրս է թափում Նազարին ընդունելու: Վրեն չերգ են կապում ու չերգում:

Ես աշխարհում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կլինի քեզ հավասար,
Ո՞վ Բաջ Նազար:

Ինչպես ուրուր,
Կաջժակ ու հուր,
Բարձր բերդից թուր հասար,
Ո՞վ Բաջ Նազար:

Ահեղ վագրին
Արիւր քո ձին,
Հեծար անցար դու սարհասար,
Ո՞վ Բաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՞վ Բաջ Նազար:

Ու պսակեցին Բաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ,
ոխտն ուր, ոխտը գիշեր հարսանիք արին, լերգով գովեցին թա-
ղավորին ու թագուհուն:

— Լուսնական նոր սարն ելավ,
Են համ նման եր:
— Լուսնական նոր սարն ելավ,
Են Բաջ Նազարն եր:

— Արեգակ նոր շաղկապ,
Են համ նման եր:
— Արեգակ նոր շաղկապ,
Են իր Նազարն եր:

Մեր թագավորն եր կարմիր,
Իրեն արեն եր կարմիր,
Թագն եր կարմիր, հաջ կարմիր,
Կապեն կարմիր, հաջ կարմիր,
Գոտին կարմիր, հաջ կարմիր,
Սուրբ կարմիր, հաջ կարմիր,

Թագուհին կարմիր, հաջ կարմիր,
Կարմիր թագուհուն բարե,
Կարմիր թագավորին բարե:

Շնորհավոր, շնորհավոր,
Բաջ Նազարին շնորհավոր,
Իր Նազարին շնորհավոր,
Վողջ աշխարհին շնորհավոր:

6.

Դու մի ասիլ՝ ես աղջկանն ուզած ե լինում հարեան չեղքի
թաղավորը: Վոր խմանում ե իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են
ամուսնացրել՝ զորք ե կապում, պատերազմով գալիս ե ոխտն ախ-
պոր վրա:

Ես ոխտը հսկան գնում են Բաջ Նազարի մոտ, պատերազմի
լուրը հաշտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում՝ հրաման
են խնդրում:

Պատերազմի անունը վոր լսում ե, սարսափում ե Նազարը,
դուրս ե պրծնում, վոր փախչի, չեա գնա իրենց գյուղը: Մարդիկ
կարծում են՝ ուզում եր իսկույն դուրս վազել, հարձակվել թշնա-
մու բանակի վրա: Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թե՛
առանց գենքի ու զրահի մենակ հուր ես գնում, լինչ ես անում,
գլխիցդ ձեռք ես վերցրել, լինչ ե...

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն ել չեղբայրնե-
րին խնդրում ե, վոր չթողնեն Նազարին իր քաջությունից տար-
ված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Յեւ լուրը գնում
տարածվում ե զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջոցով ել
հասնում ե թշնամուն, թե՛ Բաջ Նազարը մենակ առանց զենքի
թռչում եր դեպի պատերազմի դաշտը, հաղիվ են կարողացել զսպել
ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամենի նժույգ ձի չեն բերում,
Նազարին նստեցնում վրեն: Վոգևորված զորքն ել հետը վեր ե
ե կենում ահագին աղմուկով, — կեցցե Բաջն Նազար... մահ թըշ-
նամուն...

Նազարի տակի նժույգը վոր տեսնում ե՝ վրեն ինչ անպետ-
քի միսն ե նստած, խրխնջում ե, գլուխն առնում ու թռչում ա-
ռաջ, ուղիղ դեպի թշնամու բանակը: Զորքերը կարծում են՝ Բաջ

Նազարը հարձակվեց, ուռած յեն կանչում ու իրենք ել լեռնից հարձակվում ամենայն սաստկութեամբ: Նազարը վոր տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի՝ ձիուը գցում է, ուզում է մի ծառից փաթաթվի, դու մի ասիլ՝ ծառը փառած է, մի գերանաչափ ճշուղը պոկ է գալիս, մնում է ձեռին: Թշնամու զորքերը, վոր առաջուց համբավը լսել ելին ու ա՛նը սրտներումն էր, ես ել վոր իրենց աչքով տեսնում էն, ել փորներումը սիրտ չի մնում: չերես են շուռ տալիս,-- փախի, թե մարդ ես, գլուխդ պրծացրու, վոր Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Եդ որը թշնամուց ինչքան կոտորվում է, կոտորվում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի վորտի տակին, հալածում են իրենց հպատակութենն ու հնազանդութունը:

Ու պատերազմի անեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամբողջն է վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ կապում, աննկարագրելի վողեորութեամբ, ուռաներով է կեցցեններով, չերգով ու չերաժշտութունով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամավորութուններով ու ճառերով առաջն է դուրս գալի, ենպես մի փառք ու պատիվ, վոր Նազարը մնացել էր ապշած, շշկված:

Եսպես առքով-փառքով ելրերում, հրատարակում են իրենց թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ Նազարը դառնում է թագավոր, են հսկաներից ամեն մեկին ել մի պաշտոն է տալիս: Մին ել տեսնում է աշխարքը իր բռան մեջ:

Ասում են՝ մինչև եսոր ել դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու չերը քաջութունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

— Ի՛նչ քաջութուն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախան է: Բախտ ունե՞ս — քեֆ արա...

Յեվ ասում են՝ մինչև եսոր ել քեֆ է անում Քաջ Նազարն ու ծիծաղում է աշխարքի վրա:

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

(ԶԵՔԻԱԹ)

Ասոված բարի տն ձեզ ել, չերկու ախպորն ել: Լինում են, չեն լինում, չերկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են՝ ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ոռճիկ ստանա, զրկի տուն:

Եսպես ել մեծը վեր է կենում, գնում մի հարուստի մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել դարնան կկվի ձեն ածելը: Ես հարուստը մի չլաված պաշման է դնում ծառային: Ասում է. «Մինչև են ժամանակը թե դու բարկանաս — դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե չես բարկանա — չես տամ»:

— Յիս վոր հազար մանեթ չունեմ, վորտեղից տամ, — ասում է ծառան:

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղեն մին վախենում է ես տարորինակ պաշմանից, մին ել մտածում է, թե՛ ինչ պետք է պատահի: Ինչ ուզում են անեն, չես եմ ու չեմ բարկանալ, պրծանք-գնաց: Իսկ թե իրենք կբարկանան, թող իրենք ել տուժեն իրենց դրած պաշմանով:

Ասում է՝ լավ. համաձայնում է: Պաշմանը կապում են, ու մտնում է ծառայության:

Մշուս որը վաղ տերը վեր է կացնում ծառային, զրկում է արտը հնձելու:

— Գնա, — ասում է, — քանի լույս է, հնձի, վոր մութն ընկնի, կդառ:

Ծառան գնում է, — ամբողջ որը հնձում, իրիկունը գալիս է տուն: Տերը հարցնում է.

— Եդ ո՞ւր չեկար:

— Դե արևը մեր մոտով, չես ել չեկա:

— Չէ, եղբայրս չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լուս ե՛ պետք է հնձես: Արեւ մեր մտալ, բայց տես, նրա ախպեր լուսնակը դուրս չեկաւ: Սա ի՞նչ պակաս է լուս տալի...

— Եդ վճնց կլինի...— դարմանում ե ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես,— հարցնում ե տերը:

— Չէ, չեմ բարկանում... յես միայն ասում ելի՝ հոգնած եմ... միքիչ հանգստանում...— կըկըզում ե վախեցած ծառան ու գնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչև լուսնակը մեր ե մտնում: Բայց լուսնակը մեր ե մտնում թե չե, դարձյալ արեգակն ե դուրս գալի: Ծառան ուժասպառ արտում վեր ե ընկնում:

— Վա՛յ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու տված ոռճիկն ել...— սկսում ե հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես,— կանգնում ե գլխին հարուստը:— Յերբ վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե: Ել չաւես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե՝ ծառան կամ հաղար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հաղար մանեթ չուներ, թե տար, հոգին ազատ աներ. տասը տարի յեւ ես տեսակ մարդու ծառայել անկարելի բան եր: Միտք ե անում միտք, վերջը հաղար մանեթի պարտամուրհակ ե տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

— Հը՞, ի՞նչ արիր,— հարցնում ե փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում ե, գլուխն չեկածը պատմում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա, ասում ե փոքրը,— դարդ մի անի, դու տանը կաց, հիմի յելչես գնամ:

Վեր ե կենում հիմի յել փոքր ախպերն ե գնում ծառա մանում ելի նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ վորոշում ե մինչև գարնան կկվի ձին ածելը, ու պայման ե գնում, վոր յեթե ծառան բարկանա, հաղար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հաղար մանեթ տա ու են որից ել ծառան ազատ ե:

— Չէ, եդ քիչ ե,— հակառակում ե տղեն:— Թե դու բարկանաս, դու ինձ չերկու հաղար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ չերկու հաղար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Կալ,— ուրախանում ե հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառայութեան:

Առավոտը լուսանում ե, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե դալի, ես ծառան դեռ քնած ե:

— Ա՛յ տղա, դե վեր կաց ե, որը ճաշ դառալ:

— Հը՞, բարկանում ես...— գլուխը վեր ե քաշում ծառան:

— Չէ, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում ե տերը,— միայն ասում եմ՝ պետք ե արտը գնանք հնձելու:

— Հա, վոր եդ ես ասում, վոչինչ, կգնանք, ի՞նչ ես վաւորում:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել: Տերը դուրս ե գնում, ներս ե դալի, սա դեռ տրեխները հագնում ե:

— Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի չե...

— Հը՞, հո չեմ բարկանում:

— Չէ, ո՞վ ե բարկանում, յես միայն ուզում ելի ասել՝ ուշանում ենք...

— Հա, եդ ուրիշ բան ե. թե չե՛ պայմանը պայման ե:

Մինչև ծառան տրեխները հագնում ե, մինչև արտն են գնում, ճաշ ե դառնում:

— Ել ի՞նչ հնձելու ժամանակ ե,— ասում ե ծառան,— տեսնում ես՝ ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ծաշից հետո յել ասում ե. «Մշակ մարդիկ ենք, պետք ե միքիչ քնենք հանգստանանք, թե չե՞»: Գլուխը կոխում ե խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

— Տո, վեր կաց ե, մթնեց ե, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը կտորի, վա՛յ քու կերածն ել հարամ ըլի, քու արածն ել... Ես ի՞նչ կրակի մեջ ընկա...— սկսում ե գոռգոռալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր ե քաշում ծառան:

— Չէ, ո՞վ ե բարկանում, յես են ելի ասում, թե՛ մթնել ե, տուն գնալու ժամանակն ե:

— Հա, եդ ուրիշ բան ե, գնանք, թե չե հո մեր պայմանը գլխես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են՝ հյուր ե յեկել:

Ծառային՝ ղրկում ե, թե՛ գնա վոչխար մորթի:

— Վերը:

— Վորը կպատահի:

Ծառան գնում ե: Միքիչ հետո լուր են բերում հարուստին, թե՛ հասի, վոր քու ծառան ամբողջ հոտը կոտորեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Գլխին տալիս ե, զոռում:

— Ես ի՞նչ ես արել, այ անաստված, քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «վոր վոչխարը պատահի՝ մորթի», չես ել յեկա, բոլորը պատահեցին, բոլորը մորթեցի ուրիշ ավել-պակաս ի՞նչ եմ արել, — հանգիստ պատասխանում ե ծառան, — բայց կարծեմ դու բարկանում ես...

— Չե, բարկանում չեմ, միայն ափսոսս գալիս ե, վոր ես-քան ապրանքս փչացավ...

— Լավ, վոր բարկանում չես, ել կծառայեմ:

Հարուստը մտածում ե՝ ի՞նչ անի, վրձն անի, վոր ես ծառայիցն ազատվի: Պայման ե կապել մինչև մին ել դարնան կկվի ձեն ածելը, աչինիչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ վերտեղ են դարունն ու կկուն...

Միտք ե անում, միտք, մի հնար ե մտածում: Կնոջը տանում ե, անտառում մի ծառի վրա հանում ու պատվիրում, վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս ե, ծառային տանում, թե՛ արի գնանք անտառը վորսի: Հենց անտառն են մտնում թե չե, կինը ծառի վրա կանչում ե — «կուկու, կուկու...»:

— Ընչ, աչքդ լույս, — ասում ե ծառային տերը, — կկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի չե ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Չե, — ասում ե, — ով ե լսել, վոր տարու ես յեղանակին՝ ձմեռվա կիսին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն ե ածում: Յես պետք ե ես կկվին սպանիմ, սա ի՞նչ կկու չե...

Ասում ե ու հրացանը քաշում ե դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե առաջը.

— Վայ չգարկես, ասածու սիրուն... սե լինի քու պատահելու որը, ես ի՞նչ փորձանք եր, վոր չես ընկա մեջը...

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես...

— Հա, ավաղեր, հերիք եր. արի՛ ինչ տուգանք տալու չեմ, տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայմանն ե — չես ել պետք ե տուժեմ: Հիմի՛նոր եմ հասկանում են հին խոսքը, թե՛ «մարդ ինչ անի, իրեն կանի»:

Եսպես հարուստը խելոքանում ե, իսկ փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում ե, հազար մանեթ տուգանքն ել առնում ու վերադառնում տուն:

«ՀԱՌԱՉԱՆՔ» ՊՈԵՄԻՑ

(Հանգիստ)

Մթնեց: Ծերունին լուռ չարչարանքով
Միքանի կոճղեր զըրեց կըրակին,
Նորից բարեկեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել զոնային:

Ու նըստոտեցինք իրար դեմուդեմ
Սաստությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր առջև ձորն եր թըշնում խավարչալին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը:
Գիշերվան անքուն հավքերն են տխուր
Ծվում, ծրկլթում խավարի միջում,
«Վորեն» ե յեղբորը կանչում ցավալուր,
Բուն ե իր դաժան վայր կորնշում:

Ու վողջ միասին մի խորունկ թախիծ,
Մի մութ դարպառնդ են գիշերին տալի...
Ահա տարածվեց հեռու ծըմակից
Յեւ ձիգ վոռնոցը սովատանջ գիլի:

Ծանրը արնքալով թեք ընկավ ծերը,
Յերկար կոթավոր չիբուխը լըցրեց.
Գիշերվա նըման կիտած նոթերը
Խուլ վորոտալով եսպես հարցըրեց.

— Ի՞նչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ,
Իմանամ, չես ել ուրիշին ասեմ.

Մեռնող ապրողից, թանգ ու եժանից,
Կամ նոր դուրս եկած զազեթից, բանից...

Յերեք թագավոր, ասում են իբրեւ,
Խելքս չի կտրում, վոր եսպես լինի,
Խորհուրդ են արել, վոր ախուհեաե
Իր թախտից զըրկվի, ով կռիվ անի:

Ո՞վ ե իմացել եսպես հրաշք բան:
Ել ի՞նչ թագավոր կամ ե, ի՞նչ իշխան,
Վոր կռիվ չանի, ուրշին չըտիրի,
Մարդ չըկոտորի, չերկիր չավերի...

— Ե՛հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Յես շատ եմ զըզվել բաղբից, զազեթից.
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր ուր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից:

— Ի՞նչ ես կորցրել - ընչի ման գալի, —
Խոսեց ծերունին դառը խնդալով, —
Բա մեռած հո չենք, ապրում ենք, ելի,
Ամեն մեռնողի յերանի տալով:

Մեր ապրուստն ի՞նչ ե. — մի կտոր չոր հաց,
Ես ել հըրեն հա՛— չերկընքից կախված:
Մի մարդ վոր նըրա յերեսը պահի՝
Նըրա ապրուստը ի՞նչ պետք ե լինի...

Յես քեզ որինակ: Ես խոր ձորերում
Ես ե չորս քսան տարիս լըրացավ,
Վոչ մի խնդություն տեսա իմ որում,
Վոչ ել մի անգամ աչքըս լիացավ:

Ամբողջ ամառը առանց տաքիլեթ
Պըտիտ եմ գալի ես ձորի միջին,
Կըռիվս եմ տալի հազար ցավի հետ
Ու չեմ կարենում — չեմ հասնում վերջին:

Վազներից ենքան ոգուտ չի գալի,
 Ինչ նրանց համար չես փող եմ տալի.
 Գըլուխը քարը, գոնե փող լիներ,
 Ել ինչու եսքան մարդ գանգատ կաներ:
 Զախ եմ հավաքում, կրակ եմ վառում,
 Սրա համար ել փող եմ վըճարում:
 Ես դափեն ինչ ե—մի չերկու լատան,
 Հինգ ու վեց անգամ տարան դատաստան,
 Ասում են՝ գեջ ես կտրել դու մերին:
 Իրանցն ասում են ու քեզ չեն լսում,
 Մինչև չըտեսնես մեծին, պիտերին.
 Հիմի տես նրանք ինչքան են ուզում:
 Գողն ել մի կըռնից, գեղն ել մյուս կըռնից,
 Աչքըդ թեքեցիր—բանիդ տերը չես.
 Քաշում են տանից, քաշում են դըռնից,
 Ու չես իմանում՝ վոր կողմը թըռչես:
 Թե տանուտերին գանգատ եմ գնում,
 Բան չեմ վաստակում բացի դուշմանից.
 Գողերի հետքը իր տունն են տանում,
 Համեցեք զիվան ուզիր սըրանից:
 Նստեցնում ե քեզ մի չերկու բաժակ
 Տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի.
 —Դու գնա, պապի, միամիտ քընիր,
 Յես աչքի լուսը կըհանեմ գողի...
 Դարձել ե աշխարքն, անպեր, առ ու փախ,
 Մերը՝ դարձել սուր ու ջուրը՝ արին,
 Վոչ ամոթ ունի ուժեղը, վոչ վախ,
 Վալը չեկել տարել տըկարին:
 Յերեկ իրիկուն եդ կողքիդ սընից
 Կախ եյին արած չերեք հըրացան,

Տղեք են՝ փախած տանից, զիվանից,
 Յեկան ու ծեքին ել չես հեռացան:
 Ո՞վ ե մեղավոր... Միտք եմ անում, միտք,
 Ու չեմ հասկանում ով ե մեղավոր:
 Հենց են եմ տեսնում — մութ, անգետ մարդիկ,
 Ել մենք էնք մեջտեղ տանջվում ամեն ուր...
 Մեր բանն էլ, անպեր, հսպես ե չեկած,
 Մենք լեզու չունենք — ուժեղը աստված:
 Մեր հին աղաթից ընկել ենք, զըրկվել,
 Նոր ել չըգիտենք թե ինչ ե չեկել:
 Եստեղ մեզ մոտիկ թավազներ ունենք,
 Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
 Փորներն վողողած, փոխկնեքը թողած,
 Կըռները կանթած կըտերը կանգնած:
 Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի,
 Թըքես մի ծերից, մյուս ծերը կընկնի.
 Վոչ ինքն ե վարում, վոչ տալիս մեկին,
 Բուռն ե հավաքել գյուղացու հոգին:
 Գնում ե ուրշի ապրանքը տանում,
 Թագուն հավաքում իր հանդն ե անում,
 Ազմուկով քըշում իր հանդի միջից,
 Շարափ ե առնում անմեղ տիրոջից:
 Պարում ե ձմեռն հարսանիքներում,
 Կամ մեծավորի թեփշի յե լիզում,
 Մինչև միքանի շահի յե ճարում,
 Են ել տանում ե լափում Թիֆլիզում:
 Մի որ սա յեկավ, թե՛ չորան Չատին
 Վոչխարը թագուն իմ հանդն ե քաշել.
 Չատին ել կուլ չի գընաց թավադին.
 —Թող գա մի տեսնենք եդ ո՞վ ե տեսել:

Աղաչանք արի, պաղատանք արի,

—Այ տղա, ասի, յետ քաշվի, հեռի,
Բեր ձեռք վեր կալ, անեծք չար բանին...—

Բայց ի՞նչ հասկացնես բռնի չորանին:

—Ձե ու չե, ասավ, են լեռ սարի պես
Գրնաց դիք կանգնեց գեղի մեջդանում.
Ես դատաստանը, ես թավադն, ես յես,
Թող գա մի տեսնենք՝ ինձ ինչ ե անում:

Յեկան իրարու, խոսք խոսքի հասավ,

Չատին միքանի կոշտ խոսքեր ասավ.

Դե մարդիկ չերբ վոր կռիվ են անում,

Մեջտեղ փրկավ չեն իրար բաժանում:

Մեր տանուտերն ել, աստված ե որհնել,

Եսպես մի բան եր պակաս նրան ել.

Մեկի պոչը միշտ մեկեի տակին,

Յեկավ տաքացած, ճիպոտը ձեռքին:

Յեկավ ես Չատնիս հաջիցը կապեց,

Ինչքան վոր գիտես՝ քո ասած թակեց,

Թե՛ պետք ե կորցնեմ քեզ երբան հեռու,

Վոր ել չըտեսնես արևը Լոռու:

Մեր մեջ միքանի ծեր մարդ ընտրեցինք,

Գնացինք թավադի վոտը խընդիրքով,

Ինչքան վոր տվինք, ավել խընդրեցինք—

Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար.

Խոսք եք կովացրել, արին հո չարիք.

Համ ծեծել տրվիր, համ ըշտրափըդ առ,

Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք:

Սա վոտը զրեց վերի թարեքին.

—Եսքան ու եսքան բերեք, վոր ներենք...—

—Ես ե ունեցածն աստրծու տակին,

Ել չըկա, ախպեր, վորտեղից բերենք:

Ինչ արինք-չարինք, չեկավ հավատի,

Գրնաց ավելի բարձր գանգատվեց,

Թե՛ ինքըս թավադ, թավադի վորդի,

Ու չորան Չատին ինձ ուշուց տվեց...

Վերեից մի մարդ չեկավ քննու թյուն,

Մերուքը հաշա, ասողը ճակատին,

Յեկավ, վեր եկավ, վրտավ բյոխվի տուն,

—Վորտեղ ե, ասավ, են չորան Չատին...—

Չատին ել չեկավ անճոռնի ու մեծ,

Ին փետի նրման մեջտեղը տընկվեց.

Վոչ որենք գիտի, վոչ կարգն ու լեզուն,

Բերանը կապած սարի անասուն:

Գննությունն արին, բըռնեցին գյաղին,

Թե՛ ինչպես ուշուց կըտաս թավադին.

Բաց արին տեսան զըրած գակոնում,

Թե չորան Չատին Սիբիր ե գընում:

Մեր մեջ միքանի ծեր մարդ ընտրեցինք,

Գնացինք թավադի վոտը խընդիրքով,

Ինչ ուզեց, տվինք, հետն ել խընդրեցինք՝

Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,

Խոսք եք կովացրել, արին հո չարիք.

Համ ծեծել տրվիր, համ ուզածըդ առ,

Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք:

—Հո գիտեք, ասավ, յես ել խըղճի տեր,

Չեմ ուզում ընկնեմ արինն ես տըղի,

Դըրա ի իզանը մենակ ես գիշեր

Պետք ե վոր գըցի տեղը ես աղի...

Աղաչանք արի, պաղատանք արի,

—Այ տղա, ասի, յետ քնի, հեռի,
Բեր ձեռք վեր կալ, անեծք չար բանին...—
Բայց ի՞նչ հասկացնես բռնի չորանին:

—Ձեռք ու չեռ, ասավ, են լեռ սարի պես
Գրնաց դիք կանգնեց գեղի մեջդանում.
Ես դատաստանը, ես թավադն, ես յես,
Թող դա մի տեսնենք՝ ինձ ինչ ե անում:

Յեկան իրարու, խոսք խոսքի հասավ,
Չատին միջանի կոշտ խոսքեր ասավ.
Դե մարդիկ չերբ վոր կռիվ են անում,
Մեջտեղ փրկավ չեն իրար բաժանում:

Մեր տանուտերն ել, աստված ե որհնել,
Եսպես մի բան եր պակաս նըրան ել.
Մեկի պոչը միշտ մեկելի տակին,
Յեկավ տաքացած, ճիպոտը ձեռքին:

Յեկավ ես Չատնիս հաջիցը կապեց,
Ինչքան վոր գիտես՝ քո ասած թակեց,
Թե՛ պետք ե կորցնեմ քեզ երբան հեռու,
Վոր ել չըտեսնես արևը Լոռու:

Մեր մեջ միջանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի վտար խընդիրքով,
Ինչքան վոր տվինք, ավել խընդրեցինք—
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար.
Խոսք եք կովացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տրվիր, համ ըշտորափրդ առ,
Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք:

Սա վտար դրեց վերի թարեբին.
—Եսքան ու եսքան բերեք, վոր ներենք...

—Ես ե ունեցածն աստըծու տակին,
Ել չըկա, անպեր, վորտեղից բերենք:
Ինչ արինք-չարինք, չեկավ հավատի,
Գրնաց ավելի բարձր գանգատվեց,
Թե՛ ինքըս թավադ, թավադի վորդի,
Ու չորան Չատին ինձ ուշուց տվեց...
Վերեկից մի մարդ չեկավ քննու թյուռ,
Միբուքը հաչա, ասողը ճակատին,
Յեկավ, վեր եկավ, մըտավ բյոխվի տուն,
—Վորտեղ ե, ասավ, են չորան Չատին...

Չատին ել չեկավ անձոռնի ու մեծ,
Են փեռի նըման մեջտեղը արնկվեց.
Վոչ որենք գիտի, վոչ կարգն ու լեզուն,
Բերանը կապած սարի անասուն:
Բննությունն արին, բըռնեցին գլադին,
Թե՛ ինչպես ուշուց կըտաս թավադին.
Բաց արին տեսան գըրած գակոնում,
Թե չորան Չատին Սիբիր ե գընում:

Մեր մեջ միջանի ծեր մարդ ընտրեցինք,
Գնացինք թավադի վտար խընդիրքով,
Ինչ ուզեց, տվինք, հեռն ել խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղական կարգով:

Ախպեր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք եք կովացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տրվիր, համ ուզածըդ առ,
Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք:

—Հո գիտեք, ասավ, չես ել խըղճի տեր,
Չեմ ուզում ընկնեմ արինն եդ տրդի,
Դըրա ի իզանը մենակ ես գիշեր
Պետք ե վոր գըցի տեղը ես աղի...

Մարդը խիղճ ունի՝ եսպես ե տուում,
Սըրանից ավել ել ինչ եք ուզում.
Բայց տըղամարդը, վոր նամուս ունի,
Լավ ե իմանում՝ ինչ պատասխանի...

Յերեկ իրիկուն եղ կողքիդ սընից
Կախ ելին արած չերեք հըրացան...
Քանի-քանի մարդ կորավ իր տանից,
Քանի-քանի մարդ դառավ մարդասպան...

Ո՞վ ե մեղավոր: Միտք եմ անում, միտք,
Ու չեմ հասկանում ով ե մեղավոր:
Բայց իմ կարծ խելքով ենք անն եմ տեսնում—
Ապրիլ չի լինիլ եսպես ամեն որ:

Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի.
Յես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Են վոր աստվածն ե կարգ դըրել եսպես...

Յերկուսն ել հայ են, ունեն մի հավատ,
Ել ընչի՞ մուծիկ, կամ ել ինչ թավադ.
Նըրա արինը կարմիր ե մերից,
Թե՞ ավել հունար դուրս կըգա ձեռից:

Թե չե՞ թավադ ես, ինչ ուզես՝ անես,
Յես չըկարենամ քեզ մի խոսք ասել...
Եհ, մի խոսեցնի, աստված կըսերես,
Թե չե մի դաչաղ կըդառնամ յես ել...

Լռեց ծերունին: Իրար դեմ ու դեմ
Թիկնած ելինք թեժ կըրակի շուրջը,
Մեր առջև ձորն եր թըշտում խավարչաին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը:

ԳԻՔՈՐԸ

(ԶՐՈՒՅՑ)

1.

Գյուղացի Համբույի տունը կռիվ եր ընկել:

Համբուն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տա-
նի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի:
Կինը չեր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ քորփա երեխին են քյաֆուր աշխարքը
մի գցիլ չեմ ուզում,—լալիս եր կինը:

Բայց Համբուն չլսեց:

Մի խաղաղ առավոտ եր. մի տխուր առավոտ: Տանեցիք ու
հարևանները յեկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պա-
չեցին ու ճամպու գրին:

Քույրը, Ջանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալուն մոր
գրկից ձայն եր առլիս—«Գիքոր, եղ հււ ես գնում, հե՛ Գիքոր»:

Գիքորը շուտ-շուտ յետ եր նայում: Տեսնում եր դեռ գյու-
ղի ծերին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում ե
աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն եր ընկնում:
Մին ել յետ նայեց. գյուղը ծածկվիլ եր բլուրի յետ:

Աչնուհեռե գիքորը յետ եր ընկնում:

— Արի հա, Գիքոր ջան, արի հա, հասանք հա,—վորդուն
կանչելով գնում եր Համբուն, շալակին մի խուրջին, մեջը միքա-
նի հաց ու պանիր ու մի յերկու դաստա թուփուն:

Իրիկնապահին, յերբ անց ելին կենում սարերը, մի անգամ
ել չերեաց գյուղը հեռու մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն են ա հա՛, —ցուց տվավ Գիքորը՝
մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չեր յերեւում, ու
անցան:

Առաջին իրիկունը դռնադ ընկան մի գլուղում: Տանտերը Համբույի հին ծանոթն էր:

Ինչպիսի սամովարը թշուշ էր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ շրթերը լիկապնեցնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ունեւ հագին: Գիքորն հնաեղ մաքումը դրեց, վոր լերը քաղաքում փող աշխատի, իրենց Ձանընի համար մի հնաեակ շոր դարկի:

Իրիկնահացից յետը տանտերն ու Համբոն թինկը տված, չիբուխ քաշելով զրույց էյին անում: Սոսեցին Գիքորի մասին: Տանտերը գովեց Համբոյին, վոր չարչարվում էր վորդուն մարդ շինի: Հետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության վրա, բայց Գիքորը շատ էր հոգնած, քունը տարավ:

Մյուս որը քաղաք մտան: Գնացին ծերունի թավաչու մոտ: Առավորը բազարն իջան:

— Բիձա, եդ երեխին ծառա յես տալիս,— խանութի ներսից հարցրեց մի վաճառակոն:

— Հրամանք էս,— ասավ Համբոն ու Գիքորին են կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, յես կրոնեմ,— առաջարկեց վաճառականը: Նրան ասում էյին բազազ Արտեմ:

2.

Համբոն քաղաքում Գիքորին ծառա ունի բազազ Արտեմի տանը: Պայմանն են էր, վոր Գիքորը պետք է տուներ մաքրեր, ամանները լվանար, վոտնամանները սրեր, դուքանը բաժին տաներ, ու հստեսակ մանր ծառայութուններ, մինչև մի տարի:

Մի տարուց յետը բազազը նրան պետք է տաներ դուքան, շիներ դուքանի «աշկերո», ու հսպես Գիքորը պետք է բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ,— ասավ բազազը պայմանը կապելիս:— Թե զրուստը կուզես, դեռ դու պետք է տաս, վոր քու վորդին բան է սովորելու: Ախար իսկի բան չգիտի...

— Վճրտեղից գիտենա, խաղելին ջան,— պատասխանեց

Համբոն,— վոր գիտենար ել ուր կրեկի, յես ել բերել եմ, վոր բան սովորի...

— Կսովորի, ամեն բան կսովորի: Ենպես սովորի վոր... Ձեր կողմերից են Նիկոլն ինչ է, վոր իրա համար դուքան ունի բաց արած, նա յեկ ինձ մոտ է մարդ դառնել: Ամա վերջում մի ջուխտ չալի գլալ ու միքանի բան գողացավ...

— Ձե, խաղելին ջան, սա գողանալ չի: Վոր եղպես բան անի, կդամ կոնիցը կրոնեմ ու Բուռը կգցեմ:

— Հա, վոր ձեռը հալալ է՝ մարդ կդառնա:

— Իմ դարդն ել են ա, աղա ջան, վոր մարդ դառնա, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարհումս ինձ նման խեղճ ու զուրկ չմնա... Ինքն ել աչքաբաց երեխա յա, մեր գեղական շկոլումս ել գրաճանաչ ա ելել, գրի սեն ու սպիտակը ջոկում ա: Ամա աղաչանքս են ա, վոր լավ մտիկ ա նեք, դարիւր երեխա յա, քորփա յա...

Բազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձր ձեռով հրամայելով՝ «չաչ բերեք, հաց բերեք սրանց համար...»:

3.

Հեր ու վորդի նստած էյին բազազ Արտեմի խոհանոցում:

— Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա յես դուրս գալի... Հենց պետք է անես, վոր... յես լիճ գիտեմ... ո՞վ տեր աստոծ...— մոնչաց Համբոն ու չիբուխը լըցրեց:

Այնինչ Գիքորը չորս կողմն էր գիտում:

— Ապի, սրանք բուխարի չունեն:

— Ձե, սրանցը փեչն ա, աչ են ա փեչը...

— Կալ ել չունեն:

— Սրանք քաղաքացի յեն, գեղացի հո չեն, վոր կալ կանեն:

— Բա վճրտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են ուտում: Հացն ել են փողով առնում, յեղն ել, կաթն ել, մածունն ել, փետն ել, ջուրն ել...

— Վա՛...:

— Բա՛, սրան թիֆլիս կասեն: Դու հալա դոչադ կաց, դեռ շատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունեն...:

— Ունեն, բնա, սրանք ել մեզ նման հայ քրիստոնյա յեն: Մտիկ արա հա՛— ձեռնաքաշություն չանես: Կարելի յա քեզ փորձելու համար փող վեր կգցեն, մոտենաս վոչ: Թե վերցնես ել, տար ասա՝ խանութ, ես ի՞նչ փող ա, եստեղ վեր ընկած եր. ա՛ղա՛, ես բանն եստեղ գտա՛», թե չե...:

— Եստեղ ել պրիստավ կա՛, վոր...:

— Կա, բնա...: Վախտ ու անվախտ դեռ ու դեն չընկնես, ձեռք ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասություն սենենք: Դեղ ել լավ պահի, գիշերները բաց չըլես, մրսես վոչ... Մին-մին յեկողի հետ գիր դրկի...— մերթ մերթ չիբուխը բերանից հանելով վորդուն խրատում եր Համբոն: Այն-ինչ Գիքորը ննջում եր:

— Հացի կտորտանք ու քարթուն կտան, կերակուրի թեր-մացքը կտան, շատ անգամ ել իրանք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն է դա... Որեր են, կմթնեն անց կկենան...:

Շարունակում եր հերն իր խրատը: Բայց Գիքորը հորը թինկ տված քնել եր արդեն:

Են յերկու ուրը նա ենքան բան եր տեսել, ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

Մրդով լիքը խանութները, դեղերի նման դարսած գույնը— գույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեխաների խմբերը, իրար յետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կոնաչի բարձած ավանակները, թաբախները գլխներին կիստոնները... ես ամենի գոռոցն ու գնդոցը, աղմուկն ու աղաղակն իրար խառնված գծվծում եր նրա գլխում: Յեվ նա հոգնել եր ու հորը թինկը տված քնել:

Ես ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը: Կինը տրտնջում եր, վոր ծառան խամ եր, նոր սարիցն յեկած, վայրենի, իսկ մարդն ուրախ եր, վոր միքանի տարով անվարձ ծառա չեր գտել:

— Կսովորի, հո եղպես չի մնալ, — ասում եր նա կնոջը:

— Կսովորի, վորդի, սիրադ շուռ մի բերի,— խնդրում եր բազազի պառավ մայրը:

Բայց տիկին Նատոն չեր համոզվում: Նա սրտասովելով ա՛նիծում եր իր բախտը:

4

Գիքորը մենակ նստած եր բազազ Արտեմի խոհանոցում: Նա արդեն ծառայության մեջ եր:

Սաղկիկին հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին վոտնամանները վոտներին, մի մավի բլուզ ել հագին, եսպես վոտից գլուխ փոխված, նա նստած եր խոհանոցում ու միտք եր անում, թե ընչի յեկավ իրենց գլուզից, վորտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի...:

Ես ժամանակ ներս մտավ տիկին Նատոն:

Գիքորը տեղը նստած եր:

Տիկինը մի բան ասավ: Գիքորը լավ չլսեց, թե չհասկացավ:

— Դեղ չեմ ասում, տո արջի քթով:

Գիքորը շփթվեց, քրտնեց, մին ել ուղեց հարցնի, թե ինչ է ասում, մին ել սիրա չարավ: Աղջիկ-պարոնը բարկացած գուրս գնաց:

— Ը՛հ, հոգեմ ձեր գլուխը, վոր վայրենի վեք ու գալիս եք մարդի գլխի խաթա դառնում... Յեռ բան եմ ասում, նա իսկի տեղիցն ել ժամ չի գալի, ձեն ել չի հանում...:

— Վերջացավ,— անցավ Գիքորի մտքով: Բայց ի՞նչ շուտ վերջացավ... ի՞նչ վատ վերջացավ... հիմի յես ի՞նչ անեմ... հերս ել գնաց...:

Յեվ ամեն բան վերջացած եր համարում. յերբ իրեն-իրեն խոսելով ներս մտավ ցե շորերով բարի պառավը, բազազի մերը:

— Վոր աղջիկ-պարոնը ներս է գալի, տեղիցդ ընչի՞ չես կանգնում, վորդի,— խրատում եր նա Գիքորին,— վոր բան են հարցընում, ձեն հանի... վոնց կըլի եղպես...:

Պառավին դեղի էլին ասում:

Դեղին սովորեցնում եր Գիքորին, թե ինչ պետք է անի.

ինչպես սամովարը գցի, վոտնամանները սրբի, չոտքը բռնի, ամանները լվանա...

Բացի պառավ դեղին ամենքը նեղացնում էին նրան:

Բազալի «գուքանի աշկերտներն» ել շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում աղանջները:

Բայց ես բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին են եր, վոր նա չեր կարողանում քաղցին դիմանա: Իրենց տանը, յերբ սովում եր, գնում եր տաշտիցը հաց եր առնում, կծուճիցը պանիր եր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թի չե՝ փեշն եր դնում, գնում հանդը: Յերբ ուզում եր՝ մի ծառի տակի կամ աղբրի վրա նստում եր ուտում:

Հիմի եստեղ ուրիշ տեսակ եր: Ինչքան ել սոված լինեք, պետք ե ոպասեր, մինչև ճաշի ժամանակը գար, են ել ամենքն ուտելին, հետո ինքը: Եղ անիծած ժամանակն ել ենքան ուշ եր գալիս, վոր խեղճի սիրտը քամ եր ընկնում, թրթռում:

Մին, յերկու, տասը համբերելուց յետը նա սկսեց չորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու, վոր սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը գա:

Սկզբում ինչ գտնում եր—չոր հացի փշրանք, կրծած վոսկոր թե ուրիշ բան, պցում եր բերանը: Միքիչ հետո մտածեց խոհանոցի պահարանները վորոնել: Ապա թե սովորից կերակուրի պղնձից կխեփ մսի կտոր դուրս քաշել...

Բայց յեթե նկատեյին...

Ինչ վատ բան դուրս կգար...

Յեթե նկատեյին...

Հապա ի՞նչ անես...

Թողնես փախչես...

Յեվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին:

Բայց վճնց փախչես, վճր կոյմը փախչես. մենակ, ճամպա չգիտես, մարդ չես ճանաչում... Իսկ հերը...

Ենքան չարչարվեց, խոսեց, խրատեց՝ «որիք են, վորդի, կմթնեն, անց կկենան...»:

Յեվ ահա Գիքորի գլխում հնչում ե հոր խանձված ձենը,— «Որեր են, կմթնեն, անց կկենան... անց կկենան...»:

Չանգը տվին:

Գիքորը վեր թռավ: Ասել էյին, թե յերբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով ե, ինչ ե ուզում: Նա դուրս յեկավ, պատշգամբից նայեց, տեսավ՝ մի պարոն ու միքանի տիկին դռան առաջը կանգնած:

— Եղ ո՞վ եք, հեյ,— ձայն տվավ վերեից:

Ներքեից վերև նայեցին:

Տիկիները ծիծաղեցին, իսկ պարոնն ափսոսանքով ուղղվեց հարցրեց.

— Աղջիկ-պարոնը տանն ե:

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը:

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ:

— Քեզ հարցնում են տանն ե թե չե,— բարկացավ պարոնը:

— Բան ունե՞ք:

Ես աղմուկի վրա տիկինը դուրս յեկավ:

— Քրքրվես դու, գնա դուռը բաց արա, շոտ,— ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն: Բայց շուտով հյուրերը լերկացին, և նա ժպտալով դիմավորեց.

— Ա՛րարե, բարե... ես վճր խաչիցն եր, ի՞նչպես ե, վոր մտաբերեցիք...

— Ես վճրտեղից եք գտել—վոտից գլուխ Գիքորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկիները շարունակ ծիծաղում էին:

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք՝ ձեզ տանք,— կատակի տրվավ տիկինն, ու հյուրերը խնդալով ներս մտան:

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց յետևից իսկույն ներս մտավ և տիկին Նատուն:

Իրար առողջություն հարցնելուց յետը հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս յեկավ ահագին պատմություն:

— Ո՛՛ֆ, սիրտս մաշել ե,— գանգատվում եր տիկին Նատուն.— թե իմանաք՝ ինչ եմ քաշում յես դրա ձեռից... Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք ելի, ասում ե՝ մեղք ե, գեղացի չերելա յե, թող կհնա, մի կըտոր հաց ե, ուտի, կսովորի... Ախար ել յե՞րբ... սիրտս մաշեց...

— Ո՛հ, ո՛հ, ո՛հ, եղ ծառաների բանն ել մի ասի,— ես ու ես կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը:

Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քաղաքի նորություններից: Հենց այդ խոսակցություն ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը:

— Աղջիկ-պարոն, մի բան ասի:

— Հա, լավ, գնա,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ-պարոն, խաղեյինն ասում եր՝ բալը թանգ ա, հարկավոր չի...

Ես խոսքերի վրա հյուրերից վոմանք պոթկացին ու թաշկինակով բերաններին հուպ տվին, վոմանք ել տանտիկնոջ խալտառակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ թանգ է, ես ժամանակին ու երբեք առնում: Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է մի բան, չո ուտելու համար չեն լեկել, ի՞նչ են նեղություն քաշում...

Տանտիկինը մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ յեղածն ուղղի:

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել ես հիմարը:

— Ով սուտ ասի՝ գետինը մտնի,— լերդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ:

6.

Հյուրերին համալու գնելուց յետը տիկին Նատոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր եր քաղում մրգի սեղանը: Նա հայհոյում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն:

— Քա՛, խամ է, վորդի, կսովորի, վորդի... ինչի՞ չես սիրտդ շուռ բերում... Ախ, աստոծ, ինչի՞ չես հոգիս առնում,— հառաչում էր պառավ դեղին:

— Յերանի մի իմանամ՝ մարդու սրտի ես նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... խամ է, գե գնացեք դուք շինեցեք, յես հո ձեր գերին չեմ,— ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն գար:

Ամուսնու վտանգայնը վոր լսեց, սկսեց արտասվել, ավելի բարձր խոսել ու ամաններն իրար պիտով տալ:

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. յես ծառայի բանն ել կանեմ, թե խնայում ես, փող տաս, կարգին ծառա բռնես... Լավ է մարդ ծառայի տեղ ել քաշ դա, քան թե ամեն որ եսեց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չես...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բաղազը՝ տան մեջտեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. ես եր մնացել, վոր խալիս մոտ ել մարդ գետինը մտնի, ես ել արի. ել ի՞նչ պատահի,— վրա թըռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:

— Վա՛հ,— բացականչեց բաղազը:

— Ախ աստոծ,— հառաչում էր բարի պառավը՝ դեռ ու դեռ ընկնելով:

Բաղազը Գիքորին ձեն տվեց:

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկավ:

— Մոտիկ արի,— կանչեց բաղազը:

Գիքորը վախեց նրա գույնից, մնաց տեղը կանգնած:

— Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն ես սնգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո, արջի քոթոթ, յես քեզ ասում եմ՝ աղջիկ-պարոնին ասա, դու գալիս ես ղոնաղներին ասում, թե բալը թանգ եր...

— Յես... յես... աղջիկ-պարոնին... — ուզում էր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կաշծակին տվին, գլուխը զիպավ կողքի պատուհն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բաղազը վտառել անդադար կրկնելով— «բալը թանգ եր հը... բալը թանգ եր, հը...»:

Պառավ դեղին դողդողալով մեջ ընկավ, աշխատում էր յետ քաշի կատաղած վորդուն, աղջիկ-պարոնն ել լեկավ, յերեխաներն ել սկսեցին ճչալ, բաղազը յետ կանգնեց հեալով ու կրկնելով— «բալը թանգ եր, հը», աչքերը միշտ չռած անկունում կծկված Գիքորի վրա, վոր դողալով ու ցավագին մրմնջում էր.

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին։ Ենտեղ ապրանք պետք է տալին մուշտարիների հետ ամանելու, չիթ պետք է ծալել, խանութը սրբել, խակ պարապ ժամանակ մուշտարի կանչել։

Յեվ ահա Գիքորը հաց է տանում խանութը։ Կերակրամանը ձեռքին, մաշված ու տոգույն, մեծ մեծ վոսնամանները քաշտալով անց է կենում կամրջով։ Նայեց ներքև։ Քարվանսարանների բարձր պատերին զարկելով ծառա եր լինում Բուռը, վոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խուլ թշուրմ կամրջի տակին։

Ափից մոտիկ պտտում եր մի կանաչ նավակ։ Յերկու հոգի կային նրա մեջ. մինը ուռկան եր ձգում, մյուսը նալն եր կառավարում։

«Այ հիմի կհասնի», ասավ Գիքորն ու կանգնած նայում եր ձկնորսներին։ Ուռկանը դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն իմ բախտից, — ասավ Գիքորն ուռկանը ձգելիս։

Գիքորի բախտը դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն ել Զաննի բախտիցը։

Ես ել դատարկ դուրս յեկավ։

— Ես մինն ել Գալոյի բախտիցը։

Գալոն ել անբախտ։

— Ես մինն ել բաս...

Բայց եղ ժամոռակ մոտիկ քարվանսարի դռանը աղմուկ բարձրացավ։ Մի պարսիկ կապիկ եր պար ածում յերգելով։

Այ արի, արի, մեյմուեն,

Ճիպոտըդ սարի, մեյմուեն,

Պառավի պես կուզե-կուզ,

Զահելի պես պարի, մեյմուեն։

Ժողովուրդը հավաքվել եր գլխին ու վազում եյին չորս կողմից։ Գիքորն ել վազեց։ Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, չկարողացավ։ Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ձգնում եր անպատճառ տեսնի, թե ինչ է կառավրում, մեջտեղը։

— Ի՞նչ ես ներս խծկվում, տո լածիրակ, գնա քու բանին, ասալ մի կինտո ու զարկեց գլխին։

Գիքորը հանկարծ սթափվեց ու վազեց դեպի խանութը։

8.

Իրիկունը Գիքորը կուչ եր չեկել խոհանոցում։ Դեռ արտասուքը չեր ցամաքել նրա յերեսին, դեռ ալրվում եյին խազեյինի ապտակների տեղերը, դեռ նոր եր լուել աղջիկ-պարոնի ձեռնը — շվշվացնելով ներս մտավ Վասոն, բազազի աշկերտը։ Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու մասխարա դեմքին լըջություն տալով սպսոնալի հարցրեց.

— Կլուբումն ուշացած, տո արջի քոթոթ, թե՞ գուբերնատի մոտ վռազ գործ ունեյիր...

Գիքորը գլուխը չեր բարձրացնում։

— Ասա մի տեսնեմ ե, տո...

Գիքորը լուռ եր։

— Չե՞ս իմանում, տո. վոթտեղ եյիր ե, վոր հսոր ինձ քաղցած սպանեցիր. վոր մեռնեյի, հետո...

Եսպես խոսելով կամաց-կամաց մոտեցավ, միթիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին։ Գիքորը չերկո. ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին։ Վասոն պատրաստվում եր մի ուրիշ ձևի հարված ել հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խազեյինի ձայնը։ Գալիս եր։

— Աբա տես հիմի քեզ ի՞նչ է անում, — սպառնաց Վասոն։

«Հիմի ինձ կսպանեն», անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ։

Խազեյինը արդեն բավականին ծեծել եր խանութում, ալժմ միայն հրամայեց հաց չտան, վոր իմանա, թե ինչ բան է քաղցածությունը։

Վտանգն անցավ։

Գիքորը հանգստացավ, թեև լսում եր աղջիկ-պարոնի ձայնը, վոր ձնում եր. — Ախր ընչի՞ յես պահում, դուրս արա կորչի ելի, դուրս արա կորչի...

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ տրավ:

«Լուսնյակ գիշեր» բոլորովին քուռն չուռնեմ,

Ինձ տեսնողը կարծում է, թե տուռն չուռնեմ, վա՛յ, տուռն չուռնեմ...»,

Իր յերգը յերգելով Վաստն հաց եր ուտում: Գիքորը վերմակի տակից յերբեմն զգուշ ծիկրակում, թագուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա երբ որ հաց չեր զրել բերանը. ձեռքիլ ու լաց եր յիդել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քուռնը չեր տանում:

— Հը՞, վոնց ա, ստված քուռնդ չի՞ տանում, հա՛, եղպե՛ս...—
նկատեց չարածձի Վաստն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին:— Դե, առ, տեղի տակին թագուն կեր, խաղեյինը չի՛ մանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թագուն ուտում եր ու մտածում: Մտածում եր իրենց տան վրա, եր որերի վրա, յերբ աղատ խաղում եր հանգերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում եր եր յերեկոսերի վրա, յերբ հերն ու մերը կովում էին իրեն քաղաք բերելու համար...մերը լաց եր լինում, չեր ուզում...

— Ա՛խ, հանի ջան, ի՛նչ լավ եր սիրտդ իմացել,—հռուշում եր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում ա՛կանջը սրած, թե խաղեյինը հո չի գալի:

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանը:

Խանութի դռանը կանգնած ձեն եր տալի Գիքորը, մուշտարի յեր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

— Կանչի ե, տո՛, ի՛նչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերնումդ հո ջուր չկա՛:

— Ե՛ստի համեցե՛ք... Է՛ստի համեցե՛ք... կանչում եր Գիքորը:

Ներսը ծիծաղեց թուլանում ելին:

Նրան սովորեցրել էին, վոր մուշտարի քաշի դեպի իրենց խանութը: Յեվ նա հաճախ բռնում եր ես կամ եր անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում եր քաշել դեպի խանութը ու բաց չեր թողնում, մինչև վոր մարդը դուրս եր գալի համբերությունից: Գալիս եր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոթ որերին, խանութի դռանը չերկար կանգնելուց հոգնած, նա յերբեմն նստած քնում եր խանութի առաջին դարսած չիտերի վրա:

Եղ ժամանակ չարածձի ընկերները կամ հարեանները բռնոթի ելին բռնում նրա քթի տակը:

Նա փուշտալով վեր եր թռչում:

Շողից թարած վաճառականները գլարճանում էին: Ի՛նչ խաղեյինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն չի տալի:

— Քնում ես, տո, արջի քոթոթ, կանչի յե՛...

— Ե՛ստի համեցե՛ք, Է՛ստի համեցե՛ք,—ձեն եր տալի Գիքորը:

Մի որ ել Գիքորը յերբ մուշտարի չեր կանչում, զիմացեց յերկու գլուղացի դուրս չեկան: Նա վաղեց, փաթաթվեց գլուղացիներին:

— Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի վոն, ես ի՛նչ բան եր,—զարմացած բացականչեց գլուղացիներից մինը ու դարձավ ընկերին.

— Բաղո, դու կճանաչեյի՞ր...

— Յեո աչքերիցը կճանաչեյի,—պարծեցավ ընկերը:

Ճշմարեա վոր Գիքորը շատ եր փոխվել, շատ եր մաշվել, ինքն ել եր փոխվել, շորերն ել: Դժվար եր ճանաչելը:

— Ա՛յ տղա, ես կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շորհեքին...—հիանում էին գլուղացիները:

— Համբոյի հողը մեր գլխին, տես, նա իր տղին վորտեղ հասցրեց, մեր տղերքը ետեղ խող եր արածացնում...

Այնինչ Գիքորն իրար յետևից հարցնում եր.

— Իմ մերը վոնց ա... մեր Կրեյսերը վոնց են... Իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնե՞լ ա թե՞ չե... մեր գեղունիսն ո՞վ ա մեռել...

— Ամենն ել լավ են, շատ բարով կանեն,— պատասխանեցին գլուղացիք։— Են ա Սուքանանց Ղուկասը մեռավ, մին ել Պուճուրանց պառավը, քնացածը լավ են։

— Բա իմ հերն ընչի՞ չի գալի։

— Քու հերը լավ ուզում ա, ամա վոնց գա։ Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջափեն վրեն...

— Բա բան չեն դարկե՞լ...

— Ինչ ունեն, վոր ինչ դարկեն, դու ձեր տան բանը գիտես Վոնց։ Ես տարի յի հացը բարակ եր, խեղճ հերդ զոռով ծերը ծերին ա հասցնում։ Նրանցից ինչ ես ուզում։ Թե ունիս, դու դարգի։ Կրեն խարջ են ուզում— ձեռին գող չունի։

— Հո մեր տանիցն ոքմի չի՞ հիվանդացել։

— Չե, են ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փրկովը ներքե ընկավ սատկեց։

— Ծաղիկը սատկեց...

— Խեղճ մերդ ենքան լաց ելավ, աչքերը ուռան։

Ես ասելով գլուղացիներից մինը մի նամակ հանեց, տվավ Գիքորին ու ասավ։

— Հիմի ինչ ես ասում. մենք ել քեզ տեսնիլ չենք, գնալու լինք. թե մորդ կամ քվորդ համար բան ես դարկելու, տուր տանենք։

— Վո՞րտեղից բան դարկեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...

— Ամա ինչ...

— Ուզում եմ չես ել գամ ձեզ հետ։ Համ մեր գեղին, համ մերոնց կարոտել եմ, համ ել...

— Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառել, խելոքացել ես... եդ տեսակ բան կասե՞ն։ Եստեղ քեզ համար աղավալի ապրում ես— շորերդ թագա, վոտն ու ձեռդ խտակ... Մենք ասում ենք մեր երեխանցն ել տեղ անես, բերենք, դու եդ ինչ ես ասում։ Են վոր ասել են «խոզի գլուխը դրին խալիչին, դրր վեց լետ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել։

Եսպես հանդիմանեցին գլուղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին։

Նրանց գնալուց յետը Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց արավ հոր նամակը։

«Իմ սիրելի վորդի Գիքոր ջան».

Ի քաղաքն Թիֆլիզ։

«Մենք վողջ և առողջ ենք, միայն քու առողջութունն ենք ուզում, ամեն։ Քեզ շատ կարոտով բարով են անում Ապին, Նանը, Ջանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն։ Մեր սիրելի վորդի Գիքոր. ահա իմացած լինես, վոր տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Ջանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա։ Գիքոր ջան, միքանի մանիթ փող դարկի և մի դիր դարկի քու վորպիսությունիցը։ Յե՛վ իմացած ըլես, վոր Ծաղիկը սատկեց, և Նանն ու Ջանին տրկլոր են»։

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք եր անում Գիքորը. դարդ եր անում իրենց տան համար։ Սիրտն երում հյին նամակի տողերը։

— «Նանն ու Ջանին տկլոր են... Տեղներս նեղ ա...»։

— Կանչի յե, տո, ինչ ես վերացել, ուշքդ հետները գընաց...— ձեն տվին ներսից։

— Ե՛ստի համեցե՛ք, Եստի համեցե՛ք,— կանչում եր Գիքորը խանութի դռանը կանգնած։

12.

2 մեռը յեկավ։ Ստան աղմուկով ձյունախառն բուքը թռուչում և քաղաքի վրով։ Փողոցներում սուրում, սուրում, հոսան և անում։ Վզգալով մտնում և անկյունները, աղքատի ու տկլորի ման գալի, պանդուխտ ու անտեր չերխա լե վորոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած ձեն եր տալի նա.

— Եստի համեցե՛ք, Եստի համեցե՛ք...

— Հրեաս... — չարախելնդ սուղելով ցուրտը, աներևույթ թրի նման, զարկեց անցավ վոսկորները: Գիքորը դողաց:

Առանց ին ել նա շատ եր մաշված. եղբայրն էլ հերիք եր նրան: Ու անկողին ընկավ:

13.

Հիվանդ պառկած եր Գիքորը բազալ Արտեմի խոհանոցում: Պառավ դեղին ուր միքանի անգամ ներս եր մտնում իրեն-իրեն խոսելով:

— Ի՞նչ կուզես, վորդի, Գիքոր:

— Զուր...

Դեղին ջուր եր տալի: Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ազան խմում եր ու կրկին ուզում:

— Ես սիրտս հովացնում չի, դեղի... յես մեր աղբրի ստոր ջրիցն եմ ուզում, դեղի... յես մեր տունն եմ գնում... յես իմ նանին եմ ուզում...

Բազալ Արտեմը ցավի մեջ եր ընկել: Նա դեմ-դեմ ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, վոր Համբոն գա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը:

Ենտեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած: Տխուր տնքում ելին ու ոճորքին նայում անգոր հայացքներով:

Գիքորին ել պարկեցրին նրանց շարքում:

Եստեղ գտավ նրան հայրը:

— Եղ Խնչ ես ելել, Գիքոր ջան, — մղկտալով վրա ընկավ Համբոն:

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը:

— Գիքոր ջան, բա լիկել եմ ե, Գիքոր ջան... յես քու ապին եմ ե...

Հիվանդը վռչինչ հասկացավ: Նա զառանցում եր ու զառանցանքների մեջ կանչում եր—«Միկիչ, Զանի, Ապի, Նանի...»:

— Եստեղ եմ, Գիքոր ջան, նանը դարկել ա, վոր քեզ տանեմ մեր տունը... գալիս չեմ... Միկիչն ու Զանին հրեն կտերը կանգնած քեզ ճամպա լին պահում: Ի՞նչ ես ասում. դե խոսա յե. Գիքոր ջան...

— Եստի համեցե՞ք, Եստի համեցե՞ք, — բացականչեց հիվանդը, դանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում եր տաքության մեջ:

14.

Մի լերկու որից հետո Համբոն գնում եր իրենց գյուղը: Նա թաղել եր Գիքորին ու գնում եր: Կռան տակին տանում եր շորերը, վոր մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի բուռը փալլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու միքանի քորոց գտան: Են ել, յերեի, քորջ—Զանի համար եր հավաքել ու պահել...

Գնում եր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չեր անցել, վոր եղ միևնույն ճամպով քաղաք լեկավ իր Գիքորի հետ: Ահա ախտեղ եր, վոր նա ասավ.

— Ապի, վոտներս ցավում են...

Յեվ ահա են ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու...

Ահա եստեղ եր, վոր ասավ.

— Ապի, ծարավ եմ...

Ահա են աղբյուրն ել, վոր ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, միայն նա չկա...

Մյուս որը, յերբ անցնում եր լեռները՝ հեղձում լերկաց իրենց գյուղը:

Գյուղից դուրս կանգնած սպասում ելին Նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր դրկից կանչում եր.

— Ալի, ալի, հե՛ Գիքոր...

ՍՈՎԻՑ ՎԱՏԹԱՐԸ

Աշխարհում դժար է յերևակայել մի ավելի անարդար յերևույթ, քան յերբ հողագործ մարդը տարին տասներկու ամիս քարի ու հողի հետ քաշ է դալիս մի կտոր հացի համար ու վերջն ել միում է կարոտ հենց եդ մի կտոր չոր հացին։

Յեվ դժար է յերևակայել են աղետը, վոր հետևում է նրան...

Սո՛վ...

Միանգամից կտրատվում են բնական և բարոյական բոլոր կապերը կյանքի մեջ։ Յեվ սկսվում է սովի ահռելի վողբերգությունը։ Սովորական են դառնում դեպքերը, յերբ ծնողը սրտի ցավից խեղդում է իր հաց աղերսող յերեխաներին...

Ավելի զարհուրելին. — ծնողը վրա յե ընկնում խլում սովից մեռնող յերեխայի ճանկն ընկած մի կտոր ուտելիքը...

Վերջապես՝ սպանում է իր հարազատին, իր վորդուն ու միսն ուտում...

Այո, առում եմ, դժար է ամենը յերևակայել։ Բայց բանից դուրս է գալիս՝ սրանից ավելի հրեշավոր յերևույթ ել է կարող լինել աշխարհում, և եդ են է, վոր մարդ արարածը կարող է ուրախանալ սրա վրա։

Ռուսաստանի մի շարք նահանգներում սով է։

Սոված գյուղացիությունը ծառերի կեղևը կրծելով ու

խոտ արածելով՝ տասնյակ միլիոններով հորձանք է տալիս աջ ու ձախ. իր տունն ու տեղը լքած, իր դուռը փակած՝ գնում է հաց վորոնելու։

Են գյուղացիությունը, վոր աշխարհին հաց եր տալիս։

Յեվ հանկարծ կարդում ենք, թե աշխարհում մարդիկ կան, են ել աշխարհի ամենաքաղաքակիրթ մասում, Յեվրոպայում մարդիկ կան, վոր ուրախանում են ես հրակայական աղետի հանդեպ, թե ինչ է՝ սրանից կխեղճանա խորհրդային իշխանությունը Ռուսաստանում։

Բավական է ես մի լուրը մարդ կարգա, վոր սրտի ցավից հիվանդանա ու ընդմիշտ դառնա մարդատյաց։

Յեթե հավատա...

Այո, յեթե հավատա. վորովհետև հեշտ չի հավատալը, հեշտ չի հաշտվելը են մտքի հետ, թե մարդ կարող է ենթան հրեշ լինել։

Յես շատ գեպքեր գիտեմ մեր ժողովրդի կյանքից (վոչ ինտելիգենցիայի և կառավարությունների), յերբ նույնիսկ կռիվների ու ընդհարումների ժամանակ (վոր միշտ ինտելիգենցիան ու կառավարություններն են սարքում) կիսավայրենի համարված թուրք գյուղացիները յերկու կողմի կառավարող շրջաններից գաղտնի, գիշերով հաց են հասցրել սոված հայ գյուղացիներին կամ հայ գյուղացիները, թուրքերին։

Սրանից ել գենը։

Մենք գիտենք, և շատ փաստեր կան, թե ինչպես է անասունը կեր հասցնում սոված անասունին, թե ինչպես է գելը կերակրում ու խնամում անտեր ու սոված մնացած շան լակոտներին...

Եսքան առաքինություն մենք չենք պահանջիլ եդ քաղաքակիրթ մարդկանցից, բայց գոնե հերքեն, թե ճիշտ

չի, թե իրենք չեն ուրախանում ես ահուելի վողբերգության հանդեպ, վոր մենք ել, են սովից մեռնողն ել մտածենք, թե եղպես հրեշ մարդ չկա և չի կարող լինել աշխարհում...

Թող մեզ հավատացնեն, վոր իրենք ավելի թշվառ չեն, քան են սովից մեռնող գլուղացիութունը, վորովհետև դա ավելի վատթար չերևում է, քան ամենասոսկալի սովը:


Սովը վերջովերջ մի բան է ասում մեզ, թե ես-ինչ տեղը ես տարի չորացել ե յերկիրը, հողը, յերաշտ ե, վորից կ բող ենք ազատվել մոտ առաջիկայում, բայց առանյակ—առանյակ միլիոնավոր աշխատավորների, հողագործների ես ծով աղետի հանդեպ եղբան ցինիկ ուրախանալը ավելի զարհուրելի մի բան է ասում, — թե մարդկային սիրտն է չորացել ու չարացել, և զբանից ազատվելը ենպես հեշտ բան չի, ինչպես սովից ազատվելը:

Դա սովից վատթար է հազար անգամ:

Յ Ա Ն Կ

	Եջ

Ժողովրդական բանաստեղծ	5
Հին որհնություն	7
Գութանի լիբզ	17
Անիծած հարսը (լեզենդ)	19
Թագավորն ու չարչին (լեզենդ Ջուղայի գաղթից)	20
Մի կաթիլ մեղր (հեքիաթ)	23
Քաջ Նազարը (հեքիաթ)	27
Տերն ու ծառան (հեքիաթ)	33
«Հառաչանք» պոեմից (հատված)	43
Գիքորը (զբույց)	48
Սովից վատթարը	55
	72



Избранные сочинения

Ов. Туманяна



ԳԻՆՆ Ե 50 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0333531

32 312

